

ԿՐՈՒԱԿԱՆ

Հանդիյվ հոս կը ղենեմ նորին Ս. Օծութիւն Գարեգին Կարողիկոսի հոգեշնչն խօսիք, մեր խնդրանիոյ յատկան Սիրոնին դրկուած: Մոյն բարոյ նմոց մըն է նորին Ս. Օծութիւն արդին մանուշի տակ եղող կրօնական հասորին:

ԴԱՐՁ

ԴԵՊԻ ԼՈՒՍԱԽՈՐ ԿԵԱՆՔԸ

(ԱՆԱՊԱԿԻ ԿԵՒՐԱԿԻՆ)

Կորուսական էր՝ եւ զառ
(Ղակ. ժե. 3-24)

Ա.

Մեր եկեղեցու հայրերը գեղեցիկ կերպով կարգաւորել են ժամապաշտութեան գործը, երգերն ու շարականները, զին և նոր կատարանների ընթերցուածները, որպէս մի փաքրիկ ամբողջութիւն, կապելով գէպքերի, տօների կամ որոշ զաղացարների հետ: Այս զերջին կարգաւորութիւնը, յատկապէս, աչքի է ընկնում Մեծի Պահոց Կիւրակինների ընթերցուածների դասաւորութեան մէջ: ընթերցուածների ուժանց անունով էլ կոչուած են կիւրակինները: Այս օրուան կիւրակին Անառակի կիւրակին է կոչուում այն պատուական առակի անունով, որ անառակ որդու գարձի պատմութեան է վերաբերում: Ընթերցուների յիշողութեան մէջ վերակենդանացներու և մեր խօսքի հասկացողութիւնը գիւրացներու համար՝ տալիս ենք առակի համառօտ բովանդակութիւնը:

Մի մարդ երկու որդի ունէր: Կրտսերը օօրից ստանալով իրեն հասանելիք ժառանգութեան բաժինը, զնաց ստար աշխարհ, և շուայտութեամբ վատնեց իւր ստացած ամբողջ հարստութիւնը: Նորա չար բաղդից այդ երկուում սով սկսաւ և նա ստիպուեցաւ, կրեայի համար ամենից անարդ գործը, խոզարծութիւն յանձն առնել իւր մանունդը հոգալու համար: Բայց նոյն իսկ խոզերի տառջ թափած մացորդներից էլ բաժին չէր համառում նորան: Իւր ամենածանրն նեղութեան մէջ յիշեց հօր հացալից տունը, բազմաթիւ ծառակերով, և որոշեց զնալ հօր ոտներն ընկնել, որ անարժան լինելով որդի

կոչուելու, ընդունէ որպէս մէկը իւր ծառաներից: Անառակ որդին երբ մօտեցաւ և հայրը լսեց նորա գալուստը, ընդառաջ զընաց, գրկեց և համբաւըց, պատուիրեց նոր զգեստ հագցնել, պարարտ եզներից մէկը մորթել և ուրախութեան խնջութ պատրաստել, «Զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ»:

Մեծ եղայրը, երբ գաշտից տուն գարձաւ և իմացաւ պատճառը ուրախութեան, եւր գգոնութիւնը յայտնեց հօրը: Այսքան ժամանակ քեզ հետ եմ և հաւատարմութեամբ իմ որդիական պարտաւորութիւններու եմ կատարութիւններու մի կատարում: մի ուղ անգամ չտուիր, որ ընկերներիս հետ ուրախանամ, իսկ քո այս որդին, որ հարստութիւնդ անառակութեամբ վատնեց, պարարտ եզը մորթեցիր նորա համար: Բայց հայրը մեղմութեամբ պատասխանեց: «Որդեակ, զու միշտ ինձ հետ ես, և ինչ որ իմս է, քոնն է, բայց քո այս եղայրը մեռած էր և կեանք բատացաւ, կործած էր գտնուեցաւ»:

Բ

Այս պարզ, բայց պատկերաւոր, սրտառուշ և գեղեցիկ առակի մէջ ամփոփուած է աւետարանական քարոզութեան ամենամեծ գաղափարներից մէկը, երկնաւոր Հօր անսամենան զիութիւնը գէպի մարդկային նոգին և նորա բարձր գնահատութիւնը: Այս միւնոյն գտղափարը մեր Տէրը այլ և այլ ձևերով արտայատել է իւր քարոզութիւնների մէջ: Երկնաւոր Հայրը զիթութեան կատարելութիւնն է, որին պիտի հետեւն մարդիկ, նորա ինամքին են ենթարկուած բուլոր մարդիկ, որոնց զիմի մազերն անգամ համբուած են նորա կոնմից: Եթէ երկրաւոր հայրերը, որ չար են, պակասաւոր, իւրենց հաց խնդրուզ որդուն քար չեն տալ և ոչ ձուկ խնդրուներին՝ օծ, որչա՞փ ես առաւել երկնաւոր և բարի Հայրը: Մարդկային հոգին, անձը թանգ է և արժեքաւոր Աստուծոյ համար:

Բայց այդ միւնոյն գաղափարները աւելի շեշտուած և աւելի պայծառ կերպով արտայայտուած են այս օրուան ընթերցուած մէջ: Քիթսասոսի մերձաւորութիւնը մաքաւորներին և մեղաւորներին, որոնք գտալիս էին նրան լսելու, բամբասանքի նիւթ էր գարձել փարիսեցների և դպիրների կամ

սաղուէկիցիների համար, և իւշթ աչքով էին նայում, որ նա ուտում, խուռմ է, նստում, կանգնում նրանց հետո Ռւբը անգամ նա ասել էր արդէն, թէ ո՞չ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս» (Մթ. Թ. 13): Այժմ բացատրում է իւր միտքը աւելի պարզ, առակուոր կերպով։ հովիւը հօտը թողնում և փնտուիլու է գնում իւր կորսըւած ոչխարը, և երբ գտնում է, ուրախանում է կինը, որ կորցըն է իւր տաս զրամեներից մէկս, որնում է տան ամէն անկինները և երբ գտնում է, ուրախանում է իւր է ուրախակից անսում իւր դրացիներին։ Այսպէս, ամէն մի կորած հոգու գիւտը, ամէն մի մեղաւորի գարձը ուրախութեան պատճառ է հրեշտակների և Աստուծոյ համար երկնքում։

Անառակ որդին երե եկաւ, հայրը նորան չյանդիմաննեց, քննութեան չենթարկեց, թէ ինչպէս վատանց իւր հարստութիւնը, ինչպէս անառակ կեանք զարեց, այլ զրկարաց ընկունեց նորան, համրաւըց, ուրախացաւ և խնջոյք սարքեց, Բաւակա՞ն է, որ զերադարձել է մոլորուած որդին, բաւակա՞ն է որ հասկացել է իւր սիսար և դարձի ենկել, մեռելութիւնից յարութիւն է առել, փրկուած է նորա թանկագին հոգին, ոկորուսեալ էր՝ Ե գտաւու։ Մնացածները երկրորդական են։ Հայնախոսուն, ներողամիտ և սիրող երկնաւոր Հօր պատկերն է գծագրուած այսեղ գէպի մարզը, զէպի մարդկային թանկագին հոգին։ Մարզամիրութեան, անձի կամ հոգու գնահատութեան ամենաբարձր արտայայտութիւնը բոլոր կրօնների և մարդկութեան պատմութեան մէջ, և բոլորովին տարբեր, մեր սովորական մտածողութեան և հասկացողութեան չափանիշներից։

Մեր Տիրոջ կոչումը փրկիչ բառով է ահամանուած, վիկիչ բարյայկան մտքով։ Նաչեր եկել նիւթական կամ արտաքին, քազաքական կամ տնտեսական հասկացողութեամբ փրկութիւն բերելու. շատ աւելի բարձր էր, յախանական։ Նա եկել էր աւելի թանգ բանի համար, հոգիւների փրկութեան և նրանց արժէքի բարձրացման համար, «Անդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ Եւ զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ» (Մթ. Ձ. 33): Արգարութեան գաղափարը Աւե-

տարանի մտքով ոչ միայն հակագրութիւն չէ քաղաքական հշմարիտ ազատութեան և ժողովրդական կեանքի բարօրութեան, այլ և նրանց հմայքը պիտի լինի։ Մարդկային յարաբերութեան մի նոր չափանիշ էր բերել, սիրոյ և եղբայրութեան, հոգիների հաւասարութեան Եւ գնահատութեան գաղափարը։ Մի է Աստուծած, և նա երկնաւոր Հայրն է ամէնքի։ Հոգիների մէջ ազգի և սեփի խտրութիւն չկայ, արտօնեալ և իրաւագործք չկայ։ Բոյորն էլ հաւասարապէս թանգ են Աստուծոյ համար և թանգ պիտի լինին իրար համար։ «Սիրեսցից զընքրեց քո իրոք զանձն քո»։ Եւ որոշենաւ թանգ է ամենայն հոգի կամ անձն, ուստի և կորուսեալի գիւտը կամ զարձը, ուրախութիւն է Աստուծոյ համար։ Բայց ոչ միայն այդ, այլ և պէտք է կորուսեալի յետեկից գնալ, վնտուել և գտնել նորան։ Այս է պատճառը։ Որ քիսաննէութեան առաջին գարերից՝ բարի հովիւը գտած ոչխարը ուսին նիւթ է գարձել արձանագործութեան։ Հոգիների պատութեան կամ փրկութեան, նրանց բարձրացման համար է եկել Քիսասոս։ Աստուծած մեղաւորի մահը չի կամենում, այլ նորա գարձը և կեանքը։ Այսպէս են ըմբռնել և հասկացել եկեղեցական մեծ հայրեցը։ ըստ Աթանազի Քիսասոս մարդացաւ, որպէսպի մարզը աստուծանան։

Ասացինք, թէ տարբեր են այս մտքերն ու ըմբռնամեմելը մեր սովորական հասկացողութիւններից։ Մենք ուրիշների մէջ, շատ յաճախ, միայն պակասաւոր կողմն է որ տեսնում ենք, փոքր պակասութիւններն իսկ խոշորացոյց պապակիսվ զիտում, մինչդեռ պէտք էր նախ զարկան կողմէնքը որոնել և ըստ այնմ զատեկ։ Սովորական, լաւ մարդիկն անգամ, որոնց տիպն է այստեղ աւագ որդին, հաւասարիմ իւր որդիկական արտօնքին պարտականութիւնների կատարման մէջ, չի տեսնում կարեորը, երբ հաշիւները կ մօտենում խնդրին։ Նորա համար էական չէ, որ եղբայրը տան է գարձել, այլ որ հայրը ըստ արժանույն չէ գնահատել իւր հաւասարմութիւննը, իւր կարծիքով։ Իսկ պարիսխցիները ու սազուկեցիները միայն արտաքինն են տեսնում ու գտառում, ուրիշը աչքի շիւդն են տեսնում, իրենց աչքերում գերան լինելով։ «Ծնացող կողջ մէջ միայն քարկոծման արժանին,

հպարտութեան և գերազանցութեան բարձրութիւնը նայելով, առանց անդրագառնաւուու դէպի իրենց պակասութիւնները: Բայց Տէրը թափանցում է Նորա հոգու խորքը և այստեղ տեսնում է առողջ, բայց թմրած յատկութիւններ որ զարթնելով, անել և ամրողջ հոգին կենդանացնել, կերպարանափոխ անել կարող են, բոլորովին հակառակ վճիռ է տալիս: «Եւ ոչ եւ գատապարտեմ զեթզ: Ե՛թի, յայսմենէտէ մի՛ մեխանէեր» (Յովի. Ը. 11): Կենանքի մէջ, երբեմ, ներսուամտութիւնը դէպի յանցազործը աւելի գրական արդիւնք է ցոյց տալիս, քան պատիքը, որին արժանի է, միայն մարգարիտը խոզի առաջ պիտի չգել, ներողամտութիւնն էլ ամէն մարդու յատուկ չէ, այդ մեծ և բարձր հոգիններին է յատուկ և նրանք գզում են, թէ ո՛րտեղ պէտք է գործագրել:

Պ.

Դիտել է՞ք լեռների բարձունքներից աւելի հեռաւոր տարածութիւնները: Զորերն ու դրաւանդները միան ձեր շուրջն են, քանի հեռուն էք նայում, այնքան հաւասարուում են անհարթութիւնները և գեղեցիկ, ակնապարար դաշտավայրի փոխարկում: Մոռացէք եսական եւ անձնական անհաւասարութիւններն ու աեսակէտները: Սովորեցէ՞ք բարձունքից զիտել մարդկային կեանքն ու գործերը, և եթէ մի քիչ էլ թափանցէք ուրիշի հոգու խորքը և համեմատութեան գնէք ձեր ներքին աշխարհի հետ արգարութեան զգացումով, այստեղ մեծ զեղեցկութիւններ կը տեսնէք:

Արդարեւ, զեղեցիկ է մարդկային հոգին, ամենամեծ հրաշալիքը տիեզերքի մէջ, ինքն էլ մի ամենակերպ, նզուր չէ սներքին աշխարհն կուռել, մի մեծ աշխարհ է նաև, մեր մտցով և զացածունքով, մեր յօյսերով եւ ձգտումներով, մեր երեւականութեամբ և թուիչքներով, մեր սիրով և կարեկութեամբ, մեր առաքինութիւններով և բարի գործերով, մեր բարեպաշտութեամբ և խզի ձայնով . . . : Հասկանալի է, թէ ինչու մեր Տէրը մարդկային հոգին կամ ներքին աշխարհը արքայութեան վայր է ճանաչել. «Արքայութիւնն ի ներքս ի ծեղ է»: Բայց նա՝ այդ հոգին, մի դժոխք կառող է գտանալ իւր նախանձով, ատելու

թեամբ, չարութեամբ, եսականութեամբ, շահամոլութեամբ և այլ բացասական կը բերքերով:

Դալարագեղ բուրաստան գարձրէք այդ հոգին, զարգարուած սիրուն, ակնապարար, հոտաւէտ ծաղիկներով: Նմաննցէ՛ք իմաստուն վաճառականին, Տիրոջ խօսքի համեմատ, որ գաճառում է ամէն ինչ և թանկապին մարգարիտը գնում: Այդ թանկապին մարգարիտը ձեր ներքին աշխարհն է, ձեր հոգին: Ամենայն ինչ անցաւոր է, երկրորդական: Գործադրեցէ՛ք ձեր մեծ ու փոքր ունանկութիւնները, ձեր գիտութիւնը, ձեր արուեստը, ձեր գրիչը, ձեր լեզուն, ձեր ստացուածքը, որպէսզի ձեր հոգին գառնայ անգին մարգարիտ, պայծառ, լուսաւոր և աստուած անման: Ամենափոքր բարիքն էլ, մինչև ծարաւին մի՛ բաժակ ջուր մատուցանելը, անտես չի մալ Աստուծոյ աշքից: Ըստ չափու և ըստ կարողութեան, բերէք ձեր աշակցութիւնը հանրութեան բարոյական չենքի կառուցման մէջ, նախ ձեզնից սկսած և ապա ընտանիքից մինչև եկեղեցու, ազգութեան և հայրենիքի ոլրոտները: Այս է Աստուծոյ արքայութեան տիրապետութեան ուղեգիծը երկրս վրայ:

Մարդկային հոգու և անձի աշիքաւուրմը հիմքն է այս բոլորի: Անձնաւորութիւնը սուրբը է, մի՛ մասեցէք նորան երակաթի ծեռնոցներ հազար. մեծ վիշտ է պատճառում մեզ, տեսնելով մեր ժողովրդի մէջ երկապառակութեան, իրար սկացնելու, իրար հակառակելու հոգին մինչև բացարձակ թշնամութիւն: Այդ ոչ քրիստոնէական է և ոչ ազգասիրական, այլ միակողմանի մոլորութիւն, և նոյնիսկ հիւանդութիւն և սիալ հակցուած հայրենասիրութիւն է: Ամենայն մոլեաննզութիւն եւ չափազանցութիւն վնասակար է, որից պէտք է խուսափիլ:

Գնահատել մարդկային հոգին, ուրիշի անձը, պատիւը, քրիստոնէական պարտաւորութիւն է և բարեկրթութեան պատու:

Դէպի լոյս և կեանք ընթացէք Տիրոջ շափով, Աւետարանից եկած ճառագայթներով պաշնչնորդուած:

Ծնորէք Ցեան եղիցի ընդ ձեզ, ամէն:

Գ. կ.